

*Հայկական կրթարան* անուամբ գիշերօթիկ եւ ցերեկեայ վարժարան մը, որու տնօրէնն է Պ. Գուրգէն, ամեն արգելքներու եւ ձախորդութիւններու դէմ դնելով՝ այսօր խիստ կանոնաւոր վիճակի մէջ մտած է: Ահա գիւղիս ամենէն մեծ շէնքն եւ մարդը:

Հոս է *Բարեսիրաց ընկերութեան* թատրոնն, որու անունն անշուշտ հազար անգամ կարդացած եւ փողոցի պատերուն վրայ: Այս թատրոնի մէջ կներկայացուէին ժամանակաւ անմահ Պէշիքթաշլեանի եւ մահկանացու Հէքիմեանի ողբերգութիւններն, որոնց նմաններն այժմ պարզեւբաշխութեան օրերը վարժարաններու մէջ կներկայացուին ի մեծ ձանձրութիւն հանդիսականներու: Այս թատրոնին մէջ է, որ այժմ շատերը ատենաբանութիւններ կ'ընեն ժողովրդեան օգտակար նիւթերու վրայ: Անուրանալի ճշմարտութիւն մ'է, որ Միջագիւղ ամեն թաղէ առաջ սկսած է լուսաւորեալ ազգերու նմանիլ աշխատելու եւ... յաջողելու... քանի որ *նմանիլը՝ ըլլալ* չէ. միշտ պիտի յիշեն կապիկին առակը:

Այս թաղը խաղաղասէր է. պատրիարքներու փոփոխութիւններու ժամանակ բնաւ կարծիք յայտնած չէ: Օր մը եկեղեցոյն մէջ լսուած չէ. *յիշուի, չյիշուի*: Կ'երեւի, որ միջագիւղին եկող պատրիարքէն ալ գոհ է, գացողէն ալ, կամ ո՛չ եկողէն գոհ է եւ ոչ ալ գացողէն: Նոյն - իսկ թաղային գործերուն մէջ ալ չէզոքութիւն կ'պահէ. ուրիշ թաղերու մէջ շարքաթը մէկ անգամ թաղականի կռիւ կ'ծագի, հոս մինչեւ հիմա ատանկ բան մը պատահած չէ: Հոս ելնող թաղականներէն հաշիւ փնտռելու գէշ սովորութիւն ալ չկայ. գեղացին իրարու վրայ մեծ վստահութիւն ունի:

Պգտիկ երիտասարդութիւն մը կայ, որ ընկերութիւններ կազմելով լուծելով՝ ազգին իրական ծառայութիւններ կ'փափաքի մատուցանել: Մինչեւ հիմա հարիւր ընկերութիւն կազմուած եւ հարիւր յիսուն ընկերութիւն լուծուած է. իսկ հիմայ կայ Արհեստական ընկերութիւն մը, որ հաստատ քայլերով ճամբայ կ'առնէ եւ որուն նպատակն է Հայաստանի մէջ արհեստ տարածել:

Գիւղիս ազգայինները քանի մը դասերու կ'բաժանուին:

Դաս մը կայ, որ միայն դիւանագիտական խնդիրներով կ'զբաղի: Այս դասն երբ գինետուն մտնէ եւ իւր առջեւ ունենայ օղիի շիշը՝ կ'փափաքի գիտնալ, թէ Կլատաթըն ի՛նչ խօսած է Արեւելեան խնդրոյն վրայ, թէ Պիսմարք ի՛նչ ընթացք պիտի բռնէ, թէ Քումանտուրիոս ի՛նչ գրած է Ղեորդիոսին, եւ մինչեւ որ ասոնց գոհացուցիչ պատասխանները չառնէ՝ գինետունէն դուրս չելներ: